ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1. 1955 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Ագճավուրյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին խորապես հուզել է Միքայել Նալբանդյանի փոթորկալի կյանքը և ռևոլյուցիոն գործունեությունը։ Նա, դեռևս պատանի հասակում, ոչ միայն հասկացել և բարձր է գնահատել Մ. Նալբանդյանին, այլև առանձին հոդվածով, ռուս ընթերցող հասարակայնությանը ծանոթացրել է 19-րդ դարի հայ գրողներին, որոնց թվում իր հայրենիքի ազատության և փրկության համար մարտնչող մեծ հրապարակախոսին։

Հ. Հովհաննիսյանն իր հուշերից մեկում վկայում է, որ 80-ական թվականներին Լազարյան ճեմարանում լույս էին տեսնում ուսանողական թերթեր, որոնցից մեկը իր գաղափարներով հետևում էր «Հյուսիսափայլ»-ի ուղղությանը։

Հ. Հովհաննիսյանը, խանդավառված Մ. Նալբանդյանի գաղափարներով, նրան նվիրել է մի քանի բանաստեղծություն։

Այս բանաստեղծությունները գրված են 80-ական թվականներին և մինչև այժմ մնացել են անտիպ, չնայած դրանք մեծ արժեք են ներկայացնում թե՛ Հ. Հովհաննիսյանի ստեղծագործության և թե՝ Նալբանդյանի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի բացահայտման տեսակետից։ Նկատի ունենալով այդ, ստորև բերում ենք վերոհիշյալ բանաստեղծությունները.

Առաջին բանաստեղծությունը գրված է 1880 թ. մայիսի 28-ին, Մոսկվայում, անվերնագիր է.

Ճակատդ պայծառ դարբնով պսակած
Ջքնաղ Մուզայի թևերի տակին
Հանգար դու, հանճա՛ր, մեզանից մոռցված,
Զոհ քո բարեմիտ ցանկություններին։
Դու «Ազատությո՛ւն» ձայն էիր տալիս
Հայրենակցացդ, թոթափել շղթան,
Դեմ տալ հարվածին, հեռո՛ւ խավարից —
«Ոգջո՛ւյն լուսաբեր շողդ առավոտյան»...
Դու ազատ, իբրև արտուտ օդապար,
Մռայլ երկնքում քո սուրբ հայրենյաց
Հեռատես գոչում էիր անդադար,
Թե մոտ է այգը ազատ փլատակաց...
Բայց վանդակապատ դու խավար խորշում
Օտար աշխարհում աչերդ փակեցիր.
Թույնը մահաբեր քո ազատ սրտում,
Ամբոխից մնացած խեղճդ անկարեկիր։

Երկրորդ բանաստեղծության մեջ (գրված 1883 թ. մարտի 9-ին, Մոսկվայում) Հովհաննիսյանը դարձյալ խոսում է ազատության անվեհեր զինվորի առնական ոգու, անընկճելի կամքի և նրա հրաղած ազատ հայրենիքի մասին.

Առաջին զոհ.

Հուսաբեկ, մաշված ընկած է բանտում
Խոնավ, գարշահոտ գետնի վրա, մենակ,
Եվ կուրծքն առնացի ուժգին բաբախում,
Եվ շրջան արյունն առնում է արագ։
Տանջեցին նորան, կիսամեռ արին,
Բայց կամքն երկաթի ընկճել չկարացին.
Ո՛չ կին, ո՛չ զավակ զբաղում են նորան,
Այլ յուր գաղափար նախկին սրբազան։

Եվ նա քուն չունի, ոչ հանգիստ բնավ,
Եվ կատաղում է և գառըն ժպտում...
Նորա սրտումը նույն վիշտը, նույն ցավ,
Նույն փոթորիկն է, հանդուգն զարթնում.
Եվ նորա բորբոք մտածողության,
Սիրած պատկերն է կենդանացնում,
Եվ ահա՛ աղատ չքնաղ հայրենիք,
Ապա չարատանջ հայը երջանիկ...

Բայց այդ ցնորք է, և նա այդ գիտե.
Ստրո՞ւկ է հայը, լքյա՛լ, անտերունչ,
Եվ մինչ մեծատունն անհոգ օր անցնե
Հայ գեզջուկն յուր լուծ պիտ կրե անմռունչ։
Վայրագ բռնության զոհը մութ խորշում
Ապարդյուն ազնիվ յուր ույժն է մաշում.
Իսկ դո՛ւ, աղգասե՛ր մեծամիտ խոսքի,
Սպասում ես երկնից նոր մանանայի։

Երրորդ բանաստեղծության մեջ (գրված 1886 թվականին, Նալբանդյանի մահվան 20-ամյակի առթիվ) Հովհաննիսյանը դարձյալ խոսում է Նալբանդյանի ռևոլյուցիոն ոգու և անձնազոհ բնավորության մասին, նշավակելով նրա ննգ ու դավադիր թշնամիներին։

Երբ նա դեռ նոր էր լույս աշխարհ տեսել.—
Դառն աշխատության, կարիքի զավակ,—
Ավանդ ստացավ՝ սիրել և գործել
Ճակատին ծանրը խաչի նշանակ։
Եվ նա մեծացավ և կյանքը մտավ
Եվ հավատարիմ մնաց յուր խաչին,
Հանդուգն լուղորդ՝ ալյաց մեջ ընկավ,
Մրցում էր դիմում փրկության ափին։
Աներկբա մտքով, հավատող հոգով,
Քարոզում էր յուր խաչի քաղցրություն
Ինչպես խարազան երկաթի խոսքով
Նա հալածում էր շահ ու բռնություն։
Բայց չարաճճի քուրմերը ուժի
Մահաթույն լեղի արբուցին նորան,
Կարմիր երկաթով նշանը խաչի
Ջնջեցին պայծառ ճակատի վրան...
Եվ հավատարիմ յուր կոչման մեռավ,—
Սուրբ ճշմարտության անբիծ նահատակ,—
Իսկ սիրո նշանն անմահ դրոշմվեցավ
Շատերի սրտում մեկի փոխանակ...

Բերված անտիպ բանաստեղծությունները աներկբա են դարձնում Հ. Հովհաննիսյանի դրական և ջերմ վերաբերմունքը հայ նշանավոր հրապարակախոսի նկատմամբ։